

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության՝ ՀՀ ՏԿՆ-ի մասով 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի կատարման ապահովման վերաբերյալ

1. Իրականացվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի օբյեկտիվ կարիքների ուսումնասիրության և այլ չափանիշների վրա հիմնված, տեղական բյուջեների եկամտային մասի շարունակական աճն ապահովող միջոցառումներ (համայնքների բյուջեների ծախսերի եռամսյա և եկամուտների ամենամսյա մոնիթորինգ, վարչարարության բարձրացում, մշակվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի նախագիծը (ՀՌԻՄԾ 70.7 կետ):
2. Մշակվել և ՀՀ մոտ 340 համայնքներում ներդրվել է համայնքի սեփականություն համարվող գույքի (հողի, շենքերի և շինությունների) կառավարման համակարգը (ՀՌԻՄԾ 70.8 կետ):
3. Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը նպատակ ունի բարձրացնելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը, ինչպես նաև օրենսդրորեն ամրապնդելու քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը (ՀՌԻՄԾ 72.1 կետ):
4. Համայնքների բյուջեների և դրանց կատարման հաշվետվությունների հրապարակայնության ապահովման գործընթացը վերահսկվել է. իրականացվել է եռամսյակային մոնիթորինգ: (ՀՌԻՄԾ 72.2 կետ):
5. Առ 01.10.2012թ.՝ համայնքների ղեկավարների ընդունելություններին մասնակցել է թվով 33731, իսկ ավագանու ընդունելություններին՝ 5770 քաղաքացի (ՀՌԻՄԾ 72.4 կետ):
6. ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասնագետների կողմից իրականացվել է մոնիթորինգ՝ համայնքի սեփականություն համարվող գույքի սակարկությունների իրականացման գործընթացի հրապարակայնության և թափանցիկության նկատմամբ: Անհրաժեշտության դեպքում տրվել են համապատասխան պարզաբանումներ (ՀՌԻՄԾ 72.5 կետ):
7. Իրականացվել է համայնքի սեփականություն համարվող գույքի արդյունավետ կառավարման միասնական տեղեկատվական համակարգերի ներդրումը՝ համակարգը շահագործող ներդրված համայնքների քանակը հասել է մոտ 340-ի: Գործում են քաղաքացիների սպասարկման թվով 11 գրասենյակներ: Աշխատանքները շարունակվում են: (ՀՌԻՄԾ 72.6 կետ):
8. 2012 թվականի ընթացքում տարբեր հարթակներում կազմակերպվել են քննարկումներ շահագրգիռ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների

մասնակցությամբ՝ նվիրված համայնքային զարգացման ռազմավարական ծրագրերին: Բացի այդ, ՀՀ կառավարության 2013 թվականի միջոցառումների ծրագրի ՀՀ տարածքային կառավարման նախարարության հատվածում նախատեսվում է հետևյալ միջոցառումը՝ մշակել և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ կսահմանվեն համայնքի զարգացման ծրագրին ներկայացվող պահանջները (ՀՌԻՄԾ 73.4 կետ):

9. Իրականացվել է իրավունքի պետական գրանցում չունեցող համայնքային սեփականություն համարվող վարչական շենքերի և շինությունների գրանցման գործընթացը (ՀՌԻՄԾ 73.6 կետ):